ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻՆԵ ՌԱԶՄԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МОВСИСЯН МАРИНЕ РАЗМИКОВНА

ОСНОВЫ РАЗВИТИЯ ПАРТИСИПАТИВНОЙ ДЕМОКРАТИИ В ПРОЦЕССЕ ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертации на соискание ученой степени политических наук по
специальности 23.00.02- "Политические институты и процессы"

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ալեքսանյան
Քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Գրիգորյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2022թ. նոյեմբերի 16-ին, ժամը 13.00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊԿԱ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. սեպտեմբերի 29-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմ.գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Академии государственной управления РА

Научный руководитель: д. полит. н., профессор М. Маргарян
Официальные оппоненты: д. полит. н., профессор А. Алексанян
к. полит. н., доцент Н. Григорян
Ведущая организация: Российско-Армянский Университет

Защита диссертации состоится 16 ноября 2022 г. в 13:00 на заседании действующево в ЕГУ РА специализированного совета 056 "Политология и международные отношения" ВАК РА (адрес: РА, г. Ереван 0025, ул. Алека Манукяна 1).
С диссертацией можно ознокомиться в АГУ РА.
Автореферат разослан 29 сентября 2022 г..

Научный секретарь
специализированного совета 056,
к. ист. н., доцент В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում՝ արդի քաղաքական տուրբուլենտության (խառնաշփոթության) մարտահրավերներով և անորոշությունների կանխմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել համակարգված ուսումնասիրելու մասնակցային ժողովրդավարության զարգացման հիմնախնդիրները: Այս համատեքստում, աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, սոցիալ-հոգեբանական և քաղաքատնտեսական արժեքային երկվության շեշտադրմամբ, կարևորվել են Հայաստանի Հանրապետությունում մասնակցային ժողովրդավարության զարգացման և ազգային անվտանգության ապահովման ռազմավարական զուգամիտման (Convergence) հիմնախնդիրները:

Նկատի ունենալով արդի աշխարհաքաղաքական հիերարխիկ և ցանցային գործընթացների խաղային բնույթը, շեշտադրելով քաղաքացու գիտակցված մասնակցության և պատասխանատվության զարգացման մակարդակը՝ Հայաստանի Հանրապետությունում մասնակցային ժողովրդավարությունն ուսումնասիրվել է որպես ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև ռազմավարական մտածողություն ունեցող պատասխանատու և պետականամետ քաղաքացու զարգացման պայման:

Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները գլոբալ նոր տուրբուլենտ մարտահրավերներից բացի արմատապես ընդարձակել են ժողովրդավարացման գործընթացների խաղային բնույթը՝ ստեղծելով նոր անորոշություններ գլոկալ և լոկալ մակարդակներում: Մինչդեռ մասնակցային ժողովրդավարության որպես ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման հիմնախնդրի ուսումնասիրումը ենթադրում է **տուրբուլենտ մարտահրավերների** որպես **հնարավորության** դիտարկում:

Վերոգրյալը նպատակադրված է բարձրացնելու **հասարակություն-քաղաքացի-պետություն** գիտակցված **փոխպատասխանատվության** մակարդակը: Նմանօրինակ մոտեցման տիրույթներում անհրաժեշտ է բացահայտել մասնակցային ժողովրդավարության սկզբունքների կիրառելիության տարբերությունը անցումից համախմբում գործընթացում: Դա թույլ կտա ժողովրդավարական անցումը ոչ թե հանգեցնել մարգինալ-պոպուլիստական մասնակցության, այլև ձերբազատվել գծային ազատականացմամբ ուղեկցվող և ռիսկերով հագեցած ժողովրդավարական անցման հետխորհրդային մոդելից և վերադառնալ «անցում-համախմբում» հայեցակարգին: Ելակետ ընդունելով անգլիացի տեսաբան Զ. Բաումանի[1] մոտեցումը՝

[1]Տե՛ս **Bauman Z.,** 2000. Modernity and the Holocaust, Cornell University Press, New York. https://www.faculty.umb.edu/lawrence_blum/courses/290h_09/readings/bauman_intro.pdf
Bauman Z., 2002. The 20th Century: the End or a Beginning?, “Thesis Eleven”, no. 70. https://red.pucp.edu.pe/wp-content/uploads/biblioteca/Zygmunt_Bauman_20thcentury_end_beginning.pdf

փաստարկել ենք հոսող տարածություններում հասարակության անդամների անհատապաշտական արժեքաբանության սպառնալիքներն ազգային անվտանգության ապահովման գործընթացում:

21-րդ դարի ուժային բևեռների կողմից ձևավորվել է բարդ և հակասական արժեշահային համակարգ, որը ցանցավորել է ժողովրդավարական մասնակցության ռազմավարական կառավարման տիրույթը՝ նորովի դիտարկելով **հասարակություն-քաղաքացի-պետություն** շղթան: Նոր աշխարհակարգի ձևավորմամբ պայմանավորված բազմաչափ տուրբուլենտությունն ու անորոշությունն ուղեկցվում են անհատապաշտությամբ, քաղաքական զարգացման ճգնաժամերով, պետություն-պետություն և քաղաքացի-պետություն հարաբերությունների կերպափոխվող ձևերով, ինչպես նաև էթնոազգային, դավանաբանական և ազգայնական տարբերությունների հետևանքով գլոբալ, գլոկալ և լոկալ հակամարտությունների անկանխատեսելի զարգացումներով, որոնք սպառնալիք են մարդու անվտանգությանը: Ասվածը հիմնավորենք անվտանգության և խաղաղության վերաբերյալ մոտեցումների, տեսլականների 2020 թվականի 44-օրյա պատերազմի արդյունքում արձանագրված շեշտակի փոփոխությամբ: Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունում մասնակցային ժողովրդավարության և անվտանգության զուգամիտման համար պայքարող այս նոր միջավայրում ժողովրդավարական անցման ձգձգվածության արդյունքում առաջացած անորոշությունների կանխման և մարգինալ-պոպուլիստական մասնակցության հիմնախնդիրների համակարգված ուսումնասիրումը ենթադրում է **համախմբում (Consolidation)**:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը: Թեկնածուական ատենախոսության թեմայի շրջանակներում ներառված հիմնախնդիրներից որոշները տարբեր ասպեկտներով ուսումնասիրվել և ուսումնասիրվում են քաղաքագետների՝ մասնավորապես ժողովրդավարական անցման տեսաբանների և անվտանգության մասնագետների կողմից: Հայաստանի Հանրապետությունում պետական մակարդակով մասնակցային ժողովրդավարության զարգացման նախապայմանների, դրսևորումների և արդյունավետության, ինչպես նաև այդ մասնակցության հստակ ձևերի, քաղաքացիների շրջանակում քաղաքական և քաղաքացիական մշակույթի զարգացման և կայացման գործում ժողովրդավարական մասնակցության դերի մասին հետազոտություններ իրականացվել են Երիտասարդական հետազոտությունների ինստիտուտի, Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի, ԵԱՀԿ և ՄԱԿ երևանյան գրասենյակների, ինչպես նաև մի շարք այլ կազմակերպությունների և վերլուծաբանների զեկույցների հիման վրա:

Bauman Z., Consuming life, Polity Press, Cambridge, 2007, p. 157-158 https://realsociology.edublogs.org/files/2013/09/168709399-Zygmunt-Bauman-Consuming-Life-2007-1107cis.pdf

Бауман З., Текучая современность. — СПб.: Питер, 2008. — 240 с.

Պատմության հոլովույթում ժողովրդավարության և նրա ձևերի վերաբերյալ գաղափարներն ամրագրված են Պլատոնի[2], Արսիտոտելի[3], Ցիցերոնի[4] աշխատություններում: Քաղաքական ժամանակի մեջ մասնակցային ժողովրդավարության ուղղության մոտեցումներն առավել լայն տարածում ստացան Նոր դարաշրջանի տեսաբանների և հետազոտողների (Չ. Միլս, Թ. Հոբս, Ջ. Լոկ, Շ. Մոնտեսքիո, Ժ. Ռուսսո)[5] ուսումնասիրությունների արդյունքում, որտեղ առաջ քաշվեցին մարդու իրավունքների և ազատությունների, հավասարության և պատասխանատվության, քաղաքացիական հասարակության, քաղաքական և քաղաքացիական մշակույթի և գաղափարապես նմանօրինակ այլ հիմնախնդիրներ: Համակարգային ուսումնասիրություններ են իրականացվել ժողովրդավարական կառավարման տեսության ներկայացուցիչներ Մ. Վեբերի, Ա. դը Թոքվիլի, Պ. Սորոկինի, Յ. Շումպետերի, Կ. Շմիտի կողմից[6]:

Մասնակցային ժողովրդավարության մոդելի շրջանակներում առաջին խումբ ուսումնասիրությունները վերաբերում են վերջինիս արժեքային համակարգի բազմաչափության, էվոլյուցիայի և զարգացման տեսական հիմնահարցերի վերլուծությանը: Այս խմբի մեջ կարելի է դասել՝ Ռ. Դալլի, Ս. Հանթիգթոնի, Շ. Էյզենշդատի, Ֆ. Զաքարիայի, Բ. Բարբերի, Ֆ. Շմիտերի և Թ. Լինցի, Ի. Բեռլինի, Լ. Միզեսի, Ռ. Ինգլհարթի, Լ. Դայմոնդի, Ա. Մելվիլի, Ք. Փեյթմանի, Ք. Մեքֆերսոնի, Ջ. Ցիմերմանի, Ն. Բոբբիոյի, Փ. Բահրահի[7] աշխատությունները:

---

[2] Տե՛ս **Платон**.Сочинения в трех томах (4 книгах). Т. 3. Ч. 2. М., 1972, 678 с.:

[3] Տե՛ս **Аристотель.** Политика// Сочинения в четырех томах: В. 4 т. Т. 4. М., 1983, 416 с.:

[4] Տե՛ս **Цицерон**. Диалоги. О государстве. О законах. М., 1966, 224 с.:

[5] Տե՛ս **Гоббс Т.,** Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского// Сочинения: В 2 т.-Т.2. М., 1991 с.3-545, **Локк Дж**., Два трактата о правлении// Сочинения: В 3 т.-Т. 3. М., 1988, 668 с., **Монтескье Л**., О духе законов// Избранные произведения. М., 1955,803 с., **Руссо Ж.,** Об Общественном договоре. Трактаты, пер с фр.- М., 1998, 416 с.:

[6] Տե՛ս **Сорокин П.,** Человек. Цивилизация. Общество. М., 1969, 393 с., **Токвиль А. де.** Демократия в Америке. М., 1997. 593 с., **Шумпетер Й.,** Капитализм, социализм и демократия / Й. Шумпетер. - М.: БЕК, 1995. - 566с., **Шмитт К.,** Диктатура. От истоков современной идеи суверенитета до пролетарской классовой борьбы. – СПб.: Наука, 2005, 326 с.:

[7] Տե՛ս **Даль Р.,** Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М.В.Ильина. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН). —2003. с. 247, **Даль Р.,** О демократии / пер. с англ. А. С. Богдановского, под ред. О. А. Алякринского. — Аспект Пресс — М., 2000, 204с., **Хантингтон С.,** Третья волна. Демократизация в конце XX века. Пер. с англ. Л. Ю. Пантиной. М., 2003, С. 120., **Schmitter P., Karl T.,** What Democracy is… and is not/ The Global Resurgence of Democracy. J. H. University Press, 1991, 19 p., **Даймонд Л.,** Прошла ли третья волна демократизации? - ПОЛИСЮ-1999, № 1. С. 10, **Diamond L.,** III Winds. Saving democracy from Russian Rage, Chinese Ambtion, and

Մյուս խումբը կազմում են այն աշխատությունները, որոնք վերաբերում են քաղաքացիական հասարակությանը ներառելով՝ «քաղաքացիական ներգրավվածություն», «քաղաքական ակտիվություն», «քաղաքական մասնակցություն» հասկացությունները: Վերջիններս ուսումնասիրել են Ա. Ալեքսանյանը, Ա. Ադիբեկյանը, Ս. Ասլանյանը, Ն. Աբաջյանը և Բ. Քոյը, Գ. Ալմոնդը, Ա. Սալավյովը, Թ. Պարսոնսը և այլք[8]:

American complacency, New York, 2019, 5 p., **Barber B.** Participatory Democracy. // Encyclopedia of Democracy. Vol. 3. New York, 1995., **Пейтмэн К.**, Массовое участие и теория демократии // Теория и практика демократии. Избранные тексты. / Пер. с англ. Под ред. В.Л.Иноземцева, Б.Г.Капустина. М., 2006, 496 с., **Берлин И.** Философия свободы. М.: «Новое литературное обозрение», 2014, с.448, **Шумпетер Й.,** Капитализм, социализм и демократия / Й. Шумпетер. - М.: БЕК, 1995. - 566с., **Баранов Н.,** Современная демократия: эволюционный подход, С.-П., 2008, с. 208, **Мизес Л.** Свобода и собственность // Мизес Л. Либерализм в классической традиции / Пер. с англ. А.В.Куряева. М., 2001, 190 с., **Харпфер К.П., Бернхаген П., Инглхарт Р.Ф., Вельцель К.** Демократизация М.: Издательский дом Высшей школы экономики, 2015. (Переводные учебники ВШЭ). — ISBN 978-5-7598-1193-0. 708 с., **Мельвиль А. Ю.,** Опыт теоретико-методологические синтеза структурного и процедурного подходов к демократическим транзитам. Полис, № 2, 1998, с. 6-38., **Pateman C. ,** Participation and Democratic Theory Cambridge England: Cambridge University Press (1970) https://is.muni.cz/el/1423/podzim2016/POL401/um/Pateman_Dahl.pdf, **Zakaria F.,** The Rise of liberal Democracy, 1997, N 6, pp. 22-43, **Эйзенштадт Ш. Н.,** Парадокс демократических режимов: хрупкость и изменяемость (I, II) // Полис, 2002, N 2, 3, **Մարգարյան Մ. Մ. ,** Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, 2006, 392 էջ, **Մարգարյան Մ. Մ. ,** Քաղաքական արդիականացման *և* զարգացման հիմնահարցերը, *Երևան*, 2004, 261 *էջ*, **Մարգարյան Մ. Մ. ,** Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019, էջ, **Մարգարյան Մ. Մ. ,** Գունավոր հեղափոխություն. Տեսություն և տեխնոլոգիաներ, Երևան, 2021, 341 էջ, **Markarov A. A.,** Macroinstitutional Political Structures and Their Development in Armenia// Demokratizatsiya The Journal of Post-Soviet Democratization N 14(2), 2006, pp. 159-170, **Ալեքսանյան Ար. Ս. ,** Ժողովրդավարության մակարդակի չափման մոդելը// Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա: Երևան, 2015, 13-28 էջ:

[8]Տե՛ս **Алмонд Г., Верба С.** Гражданская культура: политические установки и демократия в пяти странах / пер. с англ. Е.Генделя. - М.: Мысль, 2014, 500 с, **Adibekyan A., Aslanyan S., Abajyan N., Barbara A. Coe,** “Civil Society in Armenia: From framework to reality”, An assessment of Armenian civil society (2003-2006), CIVICUS civitl society index report for Armenia, Yerevan, 2006, **Парсонс Т.,** Система современных обществ., М., 1997, 270 с.,

Քաղաքական մասնակցության ասպեկտները մոդեռնիզմի, պոստմոդեռնիզմի և մետամոդեռնիզիմ գործընթացներում արժանացել են ժամանակակից քաղաքագետների (Ռ. Ինգլհարթ, Օ՛ Դոնել, Ռ. Դալ, Յու. Հաբերմաս, Վ. Ի. Պանտին և ուրիշներ[9]) ուշադրությանը:

Երրորդ խումբը կազմում են ազգային անվտանգությանը վերաբերող աշխատությունները: Ազգային անվտանգության տարբեր ասպեկտներին անդրադարձել են հայ գիտնականներ Հ. Քոթանջյանը, Ա. Աթանեսյանը, Վ. Աթոյանը, Տ. Քոչարյանը, Մ. Շահգելդյանը, Մ. Մ. Մարգարյանը, Մ. Գ. Մարգարյանը, Ա. Այվազյանը[10]: Վերոգրյալ աշխատություններում ուշագրավ են ազգային

---

[9] **Харпфер К.П., Бернхаген П., Инглхарт Р.Ф., Вельцель К.** Демократизация М.: Издательский дом Высшей школы экономики, 2015. (Переводные учебники ВШЭ). — ISBN 978-5-7598-1193-0. 708 с., **Даль Р.,** Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М.В.Ильина. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН). —2003. с. 247, **Даль Р**., Принятие решения в демократическом обществе: Верховный суд и его влияние на политический курс государства // Теория и практика демократии. Избранные тексты. М., 2006, 208 с., **О'Доннелл Г.,** Делегативная демократи, https://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/Article/donn_del.php, **Хабермас Ю.,** Вовлечение другого. Очерки политической теории. СПб, Наука, 2001, 417 с., **Пантин И. В.,** Первая половина XXI века эпоха турбулентностт в мировом развитии, История и современность, N. 2, 2008, с. 3-9, https://www.imemo.ru/publications/info/pervaya-polovina-hhi-v-epoha-turbulentnosti-v-mirovom-razvitii-vi-pantin-istoriya-i-sovremennosty-2008-2-s-39,

[10]**Մարգարյան Մ. Գ. ,** «Քաղաքական կայունության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, 2015, 155 էջ, **Մարգարյան Մ. Մ. ,** Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. հոգեվոր անվտանգություն, Հայկական Բանակ, 3. 2018, էջ 70, **Մարգարյան Մ. Մ. ,** Հոգևոր անվտանգության հիմնախնդիրները ՀՀ ԶՈՒ-ի զարգացման համատեքստում, Հայկական Բանակ 3. 2019, Երևան:, **Քոթանջյան Հ. Ս. ,** Հայաստանի ազգային *անվտանգության* ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Երևան, 2008, 621 էջ, **Քոթանջյան Հ. Ս. ,** Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2010: **Շահգելդյան Մ. ,** «Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առանձնահատկությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2003, 70 էջ, **Атанесян А. В.,** Актуальные проблемы современных политических и конфликтных коммуникаций | Монография, Е.: Изд-во Ереванского государственного университета, 2008, 305 с., **Атанесян А. В.,** “Бархатная Революция” В Армении: Потенциал, Достижения И Риски

անվտանգության սպառնալիքների, վտանգների ու մարտահրավերների մանրամասն վերլուծությունն, ընդգծված անդրադարձն ազգային անվտանգության առանձին բաղադրիչներին, ոլորտներին և ապահովման գործընթացին ու մեխանիզմներին: Սակայն համապարփակ ուսումնասիրություն չի կատարվել ՀՀ ազգային անվտանգության վրա մասնակցային ժողովրդավարության հնարավոր ազդեցությունների և հետևանքների, ինչպես նաև հասարակություն-քաղաքացի-պետություն փոխպատասխանատու հարաբերությունների որակական բնույթի վերաբերյալ, որոնք իրենց հիմնային ազդեցությունն են ունենում ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման գործընթացում:

Ազգային անվտանգության համատեքստում հետազոտություններ են կատարվել նաև արտասահմանյան գիտնականների կողմից՝ Բ. Բուզանի, Զ. Բրժեզինսկիի, Ռ. Դարենդորֆի, Զ. Հարթմանի և այլոց կողմից[11]:

Այսպիսով, խնդրի մշակվածության աստիճանի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ աշխատություններում և այլ աղբյուրներում ուսումնասիրված են սույն թեկնածուական ատենախոսության թեմայի տարբեր ասպեկտների վերաբերյալ հիմնահարցեր, որոնք, իհարկե, նշանակալի են և արդի: Սակայն, դեռևս համապարփակ և համակարգված ուսումնասիրություն և վերլուծություն չկա այն խնդիրների վերաբերյալ, թե Հայաստանի Հանրապետությունում մասնակցային ժողովրդավարությունն իր զարգացման ընթացքում ինչպիսի դերակատարություն է ունեցել կամ կարող է ունենալ ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման գործընթացում: Այս համատեքստում չի դիտարկվել հասարակություն-քաղաքացի-պետություն փոխպատասխանատու գործակցության բնույթը, զարգացման միտումներն ու հնարավոր ազդեցությունն անվտանգային համակարգի վրա:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել և բացահայտել մասնակցային ժողովրդավարության

Политико-Протестной Активности | Полис. Политические Исследования (Polis-Politicheskiye Issledovaniya), 2018, 6, С. 80-98, **Աթոյան Վ. ,** Ազգային անվտանգության տեսության հարցերի շուրջ, «21-րդ ԴԱՐ», թիվ 2 (48), 2013թ., Երևան, **Քոչարյան Տ. Տ.** Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության վերաբերյալ |Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013, Ք 822, էջ 23:

[11]**Buzan B.,** 3 The national security problem in international relations: 1st Edition, Routledge, 9780203422144, 2011, p. 6, **Buzan B., Weaver O., Wilde de J.** Security, A New Framework for Analysis, Lomdon, 1995, p. 126, **Buzan B. ,** People, States and Fear. An Agenda For International Security Studies in the Post-Cold War Era, Warwick, 1983, p. 271., **Brzezinski Z.,** “Power and Priciple: Memoirs of the National Security Adviser, 1977-1981, NY, 1983., **Dahrendorph R**., Class and Class Conflict in Industrial Society, London, 1969., **Hartman J.,** Sustainability and National Security. Sustainability and National Security, Center for Strategic Leadership, US Army War College, Carlisle, PA, January/2012, p. 25,

սահմանադրահիրավական նորմերի և վարքաբանական առանձնահատկությունների հիմնախնդիրները ՀՀ ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման գործընթացում: Այդ համատեքստում բացահայտել հասարակություն-քաղաքացի-պետություն փոխգործակցությունն՝ ուղղված վերոգրյալ գործընթացի արդյունավետ իրականացմանը և ստացած արդյունքի կառավարման հիմնախնդիրներին: Այս մոտեցման շրջանակում էլ կարևորություն է տրվել պատասխանատու և գիտակից քաղաքացու ինստիտուտի զարգացմանը, որը հնարավորություն կտա մասնակցային ժողովրդավարությունը հանգեցնել ժողովրդավարական համախմբման: Այս նկատառումներով, որպես ժողովրդավարական համախմբման պայման, կարևորվել է քաղաքացու հարատև սոցիալականացման, գիտակցության և պատասխանատվության կառուցվածքագործառութային և վարքաբանական առանձնահատկություններն՝ ուժեղ պետության, կենտրոն-ծայրամաս հավասարաչափ զարգացման, շարունակական, քաղաքական ու քաղաքացիական կրթության և ժողովրդավարության որակի բարձրացման տիրույթներում:

Աշխատանքում առաջադրվում են հետևյալ **հետազոտական խնդիրները.**

- Ուսումնասիրել մասնակցային ժողովրդավարության էվոլյուցիան ժողովրդավարական անցումից համախմբում պայմաններում և նրանց սկզբունքների զուգամիտման առաջնահերթություններն ազգային անվտանգության ապահովման գործընթացում:
- Վերլուծել մասնակցային ժողովրդավարության մարգինալ-պոպուլիստական և լեգիտիմ մոդելները, բացահայտել վերջիններիս որակական ազդեցությունը քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման վրա:
- Շեշտադրել երիտասարդության դերը և ժողովրդավարության որակի վրա ազդող այն որոշիչ գործոնները, որոնք ապահովում են ընդարձակված օրակարգով ազգային անվտանգություն, վեր հանել տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների արդի զարգացման պայմաններում մասնակցային ժողովրդավարության մարգինալ-պոպուլիստական և լեգիտիմ մոդելների կիրառման խաղային մեխանիզմների մանիպուլյատիվ բնույթը:
- Դիտարկել մասնակցային ժողովրդավարությունը որպես քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման և կենտրոն-ծայրամաս հավասարաչափ զարգացման գործոն, բացահայտել պոպուլիզմի և քաղաքական ցինիզմի դերը մասնակցային ժողովրդավարության մարգինալ-պոպուլիստական մոդելի երկարակեցության համատեքստում:
- Հիմնավորել անհատի հոգևոր անվտանգությունն ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության գործառնման պայման՝ դիտարկելով **հասարակություն-քաղաքացի-պետություն-եկեղեցի** համագործակցությունը որպես քաղաքացու քաղաքական և ազգային ինքնության բնականոն արդիականացման գործընթացի բաղադրիչ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը մասնակցային ժողովրդավարության զարգացման խաղային տրամաբանությունն է իր մարգինալ-պոպուլիստական և լեգիտիմ մոդելներով, և նրանց միջև առկա տարբերությունները՝ ժողովրդավարական անցումից համախմբում էվոլյուցիայի գործընթացում:

Հետազոտության առարկան է մասնակցային ժողովրդավարության զարգացման հիմնախնդիրները ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործընթացում, ինչպես նաև անվտանգային համակարգի նոր մարտահրավերների:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը: Հիմնախնդրի ուսումնասիրության մեթոդների ընտրության հարցում որոշիչ են արդի քաղաքական գիտության զարգացման հրամայականները: Թեմայի ուսումնասիրումն իրականացվել է քաղաքական ինստիտուտների և գործընթացների, քաղաքական մարդաբանության, անցումագիտության, համախմբագիտության, քաղաքական գլոբալիստիկայի, գլոլոկալիստիկայի, քաղաքական ցանցագիտության շրջանակներում: Նշված գիտաճյուղերի տիրույթներում ուսումնասիրվել են հասարակություն-քաղաքացի-պետություն պատասխանատվության փոխներդաշնակման հիմնախնդիրները՝ որպես մասնակցային ժողովրդավարության որակի և անվտանգության ապահովման երաշխիք: Այս բազմաչափ հիմնախնդրի ուսումնասիրությունը կատարել ենք համակարգային և սիներգետիկական մեթոդներով: Իրականացրել ենք կառուցվածքագործառնական և վարքաբանական վերլուծություն՝ մասնակցության մանիպուլյատիվ դրսևորումներն ընդգծելու նպատակով: Մասնակցային ժողովրդավարության զարգացման հետազոտությունը կատարելիս կիրառվել է համեմատական մոտեցում, որի շնորհիվ բացահայտել ենք մասնակցային ժողովրդավարության որոշիչ հատկանիշներ, ուսումնասիրել վերջինիս փոխկապակցվածությունը քաղաքացիության ինստիտուտի, քաղաքական և քաղաքացիական մշակույթների, իրավական և անվտանգային համակարգերի հետ: Իրականացվել է բովանդակային վերլուծություն, կազմվել են իրավիճակային (Case Study) ուսումնասիրություններ, իրադարձային վերլուծություններ: Ինչպես նաև կիրառվել է դիսկուրս-վերլուծության մեթոդը, որի միջոցով կարողացել ենք առավել խորն ուսումնասիրել մեր առջև դրված խնդիրները և ձևավորել գործնական նշանակության առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Քաղաքական գործընթացներում քաղաքացիների մասնակցության մշտադիտարկման, հետազոտման և համեմատական վերլուծության արդյունքում մշակվել են քաղաքացիների քաղաքական վարքի շահադրդման եղանակները և քաղաքական սոցիալականացման մակարդակի բարձրացման գործնական ուղիները: Հետազոտության ընթացքում նախապես դրված խնդիրների հաղթահարումը հնարավորություն է տալիս առաջ քաշել տեսական ու գործնական նշանակության գաղափարներ և դրույթներ, որոնցից գիտական նորույթի իմաստով առավել նշանակալի և կարևոր են հետևյալները.

- Կիրառելով մասնակցային ժողովրդավարության հետազոտման համար առանցքային նշանակություն ունեցող դիսկուրս-վերլուծության մեթոդը

ներկայացրել ենք **քաղաքական սոցիալականացման պետության կողմից ուղղորդվող, վերահսկվող ազգային մոդել:**

- Մասնակցային ժողովրդավարության արժեքային բազմաչափության համատեքստում բացահայտվել են մասնակցային ժողովրդավարության մարգինալ-պոպուլիստական մոդելի զարգացման բացասական ազդեցություններն ազգային անվտանգության ապահովման գործընթացում:
- Մետամոդեռնիզմի շրջանակներում համեմատական վերլուծության հիման վրա մասնակցային ժողովրդավարության մշակութային տեքստի ազդեցությունը փաստարկվել է որպես ազգային անվտանգության ապահովման ընդարձակված օրակարգի վրա ազդեցության գործոն:
- Քաղաքացիական գիտակցությունը հայեցակարգային մոտեցմամբ ուսումնասիրելիս այն առաջադրվել է որպես քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունների ամրապնդման մեխանիզմ և ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման բաղադրիչ: Եզրահանգելով՝ քաղաքական զարգացման գոյություն ունեցող հինգ ճգնաժամերին գումարվել է ևս մեկը՝ **քաղաքացիության ճգնաժամը:**
- ՀՀ-ում քաղաքական համակարգի շարունակական ժողովրդավարության խաղային բնույթը նկատի ունենալով համակարգվել է մասնակցային ժողովրդավարության արժեքաբանության և քաղաքացիների գիտակցության համապարփակ մոտեցում, ըստ որի մարգինալ-պոպուլիստական մասնակցային մոդելի կիրառման դեպքում դոմինանտություն են ստանում **ժողովրդավարության կեղծ օրակարգերը**, որոնց ցանցավորումը **բացասաբար է ազդում անվտանգային միջավայրի վրա:**
- Անվտանգության ապահովման մեխանիզմների կառուցվածքային-գործառնական հիմնախնդիրների վերլուծությունը համեմատական քաղաքագիտության շրջանակներում թույլ է տալիս փաստել հոգևոր անվտանգության հիմնային նշանակությունը ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործընթացում և վերջինիս ազդեցությունը պետականաշինության գործում:
- Տեսական ուսումնասիրություններով իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա **ապացուցվել է**, որ քաղաքացիական կրթության ցածր մակարդակ ունեցող անձանց առավել հեշտ է դարձնել մարգինալ-պոպուլիստական մոդելի թիրախ և խաղարկման միջոցով ճոճել ժողովրդավարական անցման գործընթացը՝ քաղաքական զարգացման ճգնաժամերի մեկնությունը մարգինալացնելով:
- Հետխորհրդային երկրներում ժողովրդավարական անցման հետագիծն ուսումնասիրելով՝ արժեքաբանական անորոշություններով պայմանավորված առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերը դիտարկվել են որպես ազգային անվտանգության սպառնալիքներ:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը: Մասնակցային ժողովրդավարության զարգացման, երիտասարդության և

շարունակական կրթության դերի, քաղաքացիական գիտակցված մասնակցության կատեգորիաների ճշգրտման և նրանց ազդեցությունն ազգային անվտանգության ապահովման գործընթացի լուսաբանումն է՝ խնդրադրման ու արդյունքի կառավարման փաստարկմամբ: Տեսական նշանակություն է դիտարկվել նաև քաղաքացու գիտակցված մասնակցության և քաղաքացիական կրթության հարատև կապը: Քննարկվել են մասնակցության դերն ու ազդեցությունն անվտանգության ապահովման գործընթացում: Հետազոտության մեջ կատարված ընդհանրացումները կարող են ներառվել մասնակցային ժողովրդավարության զարգացմանն ուղղված ծրագրերում, հայեցակարգերում, ինչպես նաև քաղաքացիական մասնակցության և անվտանգության (մարդու, հոգևոր, տեղեկատվական, ազգային, գլոկալ, գլոբալ մակարդակներում) ապահովման ռազմավարական քաղաքականությունում:

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ վերջինիս նյութերն ու եզրահանգումները կարող են կիրառվել քաղաքական կուսակցությունների, պետական քաղաքականության տարբեր ոլորտների կարգավորման հայեցակարգերի կատարելագործման, մշակման և իրականացման, ռազմահայրենասիրական դաստիարակության և երիտասարդության քաղաքական մասնակցության պետականամետ մոդելի մշակման, կենտրոն-ծայրամաս հավասարաչափ զարգացման գործում:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ պետական իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև հարաբերությունների օպտիմալացման հարցում:

Ատենախոսական հետազոտության նյութերը կարող են օգտագործվել այնպիսի հատուկ դասընթացների նախապատրաստման համար, ինչպիսիք են «Ազգային անվտանգություն», «Ազգային անվտանգության ապահովման մեխանիզմներ», «Պետական ռազմավարական քաղաքականություն», «Քաղաքական գործընթացների մոդելավորում», «Քաղաքական բանակցություններ և PR տեխնոլոգիաներ»:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են շուրջ երկու տասնյակ գիտաժողովներում և սեմինար-քննարկումներում՝ ՀՀ-ում և ԱՀ-ում:

Ատենախոսության հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են 10 գիտական հրապարակումներում, որոնցից մեկը՝ Scopus գիտաչափական շտեմարանում ընդգրկված պարբերականում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, որը բաղկացած է 145 անվանումներից: Ատենախոսության ծավալը 121 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված է խնդրի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու

խնդիրները, գիտական նորույթը, աշխատանքի գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Մասնակցային ժողովրդավարության արժեքային համակարգը որպես ժողովրդավարական անցումից համախմբման նախապայման»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Մասնակցային ժողովրդավարության արժեքային էվոլյուցիան և մոդելները»** վերնագրով, ուսումնասիրվել և վերլուծվել են քաղաքական ժամանակի և տարածության մեջ մասնակցային ժողովրդավարության արժեքային էվոլյուցիայի դինամիկան, հետազոտվել են վերջինիս մարգինալ-պոպուլիստական և լեգիտիմ մոդեները, ինչպես նաև պատասխանատու և գիտակից քաղաքացու դերն այս գործընթաներում:

Մասնակցային ժողովրդավարությունը վերարժևորեց պոլիսային Ագորայի պատկերը, որտեղ քաղաքացիները որոշումներ կայացնելու իրավունքը իրացնում էին հենց իրենք: Այս տեսությունը փորձ է վերադառնալու դասական ժողովրդավարության սկզբունքերին: Մարդը բացի կոլեկտիվի մաս դիտարկվելուց, ըստ տեսության գաղափարական սկզբունքի պետք է լինի նաև ինքնակառավարվող քաղաքացի:

Սակայն, գլոբալիզացիան և աշխարհակարգի վերաձևման ակտիվացող գործընթացները նոր մարտահրավերներ են առաջ բերել գլոբալ, գլոկալ և լոկալ մակարդակներում, ինչը չի կարող կարգավորվել ժողովրդավարության ձևական մեխանիզմներով: Այս համատեքստում, փաստենք, որ մասնակցության մարգինալ-պոպուլիստական մոդելը ինքնին կեղծ ժողովրդավարություն է, ուր քաղաքականություն մշակող և որոշում կայացնող էլիտան թույլ է տալիս հնարավորինս շատ քաղաքացիների մասնակցություն տարբեր գործընթացների՝ փաստացի վարելով ռիսկերից խուսափման քաղաքականություն՝ ողջ պատասխանատվությունը թողնելով քաղաքացու ինստիտուտի վրա:

Այսպիսով, մարդու քաղաքացիական ու քաղաքական պատասխանատվությունը, կրթվածությունը, գիտակցությունը և տարաբնույթ քաղաքական ուժերի նկատմամբ կառուցողական-քննադատական վերաբերմունքի մշակումը կենսական է մասնակցային ժողովրդավարության լեգիտիմ մոդելի զարգացման և կայացման գործընթացում:

Երկրորդ ենթագլխում՝ **«Մասնակցային ժողովրդավարությունը որպես քաղաքական ճգնաժամերի հաղթահարման գործոն»** վերնագրով, համալիր ուսումնասիրել և ներկայացվել են կենտրոն-ծայրամաս, զարգացած-զարգացող երկրների, ինչպես նաև ընտրազանգվածի և էլիտաների արժեշահային համակարգի փոփոխությունների տրամաբանությունը մասնակցային ժողովրդավարության կիրառման համատեքստում: Փաստվել է, որ քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման համար, անհրաժեշտ է ապահովել քաղաքացու շարունակական և զարգացող կրթություն, սոցիալական երկխոսություն, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել գիտակցված և առանցքային մասնակցություն, նվազեցնել

սերունդերի միջև առկա խզումը, ինչպես նաև քաղաքական դերակատարների քաղաքականությունից բացառել պոպուլիզմն ու դեմագոգիան:

Երկրորդ՝ **«Մասնակցային ժողովրդավարությունը որպես Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման բաղադրիչ»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Մասնակցային ժողովրդավարությունը ՀՀ-ում ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման հնարավորություն»** վերնագրով, քննարկվել է այն միջավայրը, որում գտնվում է Հայաստանի Հանրապետությունը և ստիպված է հրատապ լուծել իր լինելիության և պետականության պահպանման դժվարին հիմնախնդիրները: Մասնակցային ժողովրդավարությունն ըստ էության ենթադրում է **ինքնօգնության, փոխօգնության, պատասխանատվության, հավատի և վստահության, արդարության և հավասարության սկզբունքներ,** որի հիմքով անվտանգային քաղաքականության և արտաքին քաղաքականության գծերը կարելի է զարգացնել՝ ապահովելով կայուն անվտանգային միջավայր:

Այսպիսով, մասնակցային ժողովրդավարությունը որպես ազգային անվտանգության ապահովման, պետականության ամրապնդման, պահպանման պայման բազմամակարդակ երևույթ է և անվտանգության ապահովման ընդարձակված օրակարգի բաղադրիչ, սակայն հարաբերական անկախության մեջ է գտնվում՝ պայմանավորված կենտրոն-ծայրամաս տարածական հարթություններում առկա մարդու անվտանգության հիմնախնդրի վերլուծությամբ և պատասխանատվությամբ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սոցիալական մեդիայի դերը Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման գործընթացներում և ազգային անվտանգությունը»** վերնագրով, քննարկվել են աշխարհակարգի վերաձևման և գլոբալացման գործընթացների կապը տեղեկատվության ու տեղեկատվական բնույթի գործընթացների հետ: Անդրադարձ է կատարվել հետխորհրդային տարածաշրջանին, մասնավորապես ՀՀ-ին, որոնք բնութագրվում են տարաբնույթ քաղաքական ու ռազմաքաղաքական զարգացումներով, էթնոդավանական, ազգերի ինքնորոշման, տարածքային ամբողջականության իրավունքների հակադրման հիմքով առաջացած հակասությունների սրմամբ, իրենց չլուծված հակամարտություններով և անընդհատ սպառնացող վտանգներով: Ազատության և հավասարության շուրջ բորբոքվող կրքերը հիմնականում ձեռք են բերում կույր ինքնաբուխ շարժման բնույթ, վերածվում ինքնաոչնչացման հզոր գործոնի: Փաստորեն, թվային տեխնոլոգիաները լայնածավալ փոփոխել են քաղաքացիական հասարակության ավանդական կազմակերպությունների աշխատանքի ռացիոնալացման, արդյունավետ գործունեության և նպատակադրված գործընթացների մակարդակը: Այսպես, ժողովրդավարացման գործընթացի արդյունքի և քաղաքական որոշումների հաջողության հիմքերը ներկայումս կերպափոխվել են ողջ աշխարհում, այդ թվում նաև ՀՀ-ում՝ ստանալով ցանցաթվային նոր դրսևորումներ և հիմքեր:

Երրորդ՝ **«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մեխանիզմների արդիականացումը, բազմավեկտորությունը»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը որպես անվտանգության ապահովման պայման Հայաստանի Հանրապետությունում»** վերնագրով, քննարկվել է հետպատերազմական ՀՀ-ում երիտասարդության քաղաքական սոցիալակացման գործընթացը որպես անվտանգության ապահովման հիմնախնդիր: Փաստ է, որ յուրաքանչյուր հասարակությունում որպես միջխմբային լարվածությունը խթանելու, նվազեցնելու կամ մանիպուլյացնելու միջոց գերակա տեղ ու դեր ունի քաղաքական սոցիալականացման գործընթացը: Միաժամանակ, ուսումնասիրվել է ուժային բևեռների շահերի բախումները տարածաշրջանում, ինչպես նաև տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն ու կիբեռ կառավարման մեխանիզմները հանգեցրել են առավել բարդ իրավիճակի՝ խորացնելով ներքին և արտաքին քաղաքական անկայունությունը տարածաշրջանում, ծնել նոր անորոշություններ ներկա և ապագա համագործակցության, համակեցության և անվտանգության ապահովման վերաբերյալ: Ակնհայտ են կառավարման և անվտանգային ճգնաժամերը: Փաստվել է, որ երիտասարդների քաղաքական ներուժի մանիպուլյատիվ օգտագործումն հղի է ազգային անվտանգության սպառնալիքներով:

Երկրորդ՝ **«Քաղաքական և քաղաքացիական մշակույթի փոխհարաբերությունների արժեքաբանությունը որպես Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական համախմբման գործառնման հրամայական»** վերնագրով ենթագլխում, ներկայացվել են քաղաքական գործընթացների ժամանակ կիրառվող տեղեկատվահաղորդակցական, թվային, հոգեբանական գործիքները, ինչպես նաև քաղաքացիների ինքնաբուք և/կամ ակտիվ կազմակերպված մասնակցության հիմքերն ու պատճառները: Ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական մշակույթի փոխհարաբերության համատեքստում քննարկվել են պետականամետ ղեկավարման կարևորությունը և արդյունավետությունը՝ անկախ իշխող անհատների հանգամանքից և կախված նրանց մասնակցային ժողովրդավարության լեգիտիմ մոդելի և պետական ինքնիշխանության ընկալումներից:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալները.

1. Անցումային երկրներում ժողովրդավարական համակարգի ձգտող քաղաքացիները ցուցաբերելով ակտիվ մասնակցություն, հավատալով, որ իրենք կարող են բեկումնային փոփոխություն կատարել, ձգտելով ազատության, վստահելով դաշտում հայտնված անհատներին, ովքեր խոստանում են տալ իրենց բոլոր խնդիրների լուծումը՝ մարգինալ-պոպուլիստական մոդելի գործառնման ժամանակ մանիպուլացվելով դառնում են անմիջական գործիք՝ հասնելու այդքան տենչալի իշխանությանը:

2. Մասնակցային ժողովրդավարության արժեքային բազմաչափությունը ենթադրում է ներկայացուցչական ժողովրդավարության հետ համադրություն՝ երկու ձևով՝ միասնական գոյություն կամ փոխլրացում: Փաստ է՝ քաղաքական դիսկուրսը փոփոխվել է. այն պետք է հարմարեցվի թվային տեխնոլոգիաների առաջընթացին:
3. Անցումային ժամանակաշրջանում, խորը ճգնաժամային և պայքարի առկայությամբ ինստիտուտների փոխարինման գործընթացում, երբ տիրում է համատարած անորոշության, դժգոհության մթնոլորտ հիմնականում ակտիվանում են պոպուլիստ և դեմագոգ քաղաքական գործիչները և ստանձնելով մեղադրողի դերը, իրենք իրենց ներկայացնելով որպես վախի և անարդարությունների հաղթահարող, որոնք նախկինում եղել էին տաբու կամ դիտավորյալ անտեսվել իշխանության կողմից, անազնիվ պայքար մղում հանուն իշխանության՝ փաստացի քաղաքական զինիզմը բերելով դաշտ: Այսօրինակ պայմաններում ժողովրդավարական համակարգի ձգտող քաղաքացիները դառնում են անմիջական գործիք հասնելու այդքան տենչալի իշխանությանը:
4. Կայուն (persistent) և համախմբված (consolidation) ժողովրդավարական մասնակցության կառուցվածքային հիմքերն են սոցիալ-տնտեսական համակարգը, արմատավորված ժողովրդավարական քաղաքացիության նորմերը ու արժեքները, գիտակցության բարձր մակարդակը:
5. Փաստորեն, անցման և մասնակցության տարբեր եղանակներ և լուծումներ կան, ինչպիսիք են, օրինակ՝ ժողովրդավար ինստիտուտների և գործընթացների համախմբումը (consolidation), հիբրիդ համադրությունը (hybrid combination) և/կամ կառավարման նոր տեսակների ձևավորումը:
6. Ոգեղենությունը՝ որպես սոցիալական զարգացման ժամանակակից միտումների արտացոլում, հնարավորություն է տալիս արդի մարտահրավերներին համահունչ բարձրացնել մշակույթի, պատմական հիշողության և ապագա սերունդների նկատմամբ պատասխանատվության մակարդակը: Հնարավորություն տալով՝ ապահովել հայոց լեզվի և հայ ժողովրդի ժառանգության բազմազանությունը, նորարացնել գիտական ներուժը և բարձրացնել երիտասարդների մրցունակությունը:
7. Ժողովրդավարացման և ինստիտուցիոնալացման գործընթացները մեծապես թևակոխել են թվային տիրույթ՝ արձանագրելով աննախադեպ ցուցանիշներ: Թվային գործիքներն ուժեղացրել են սոցիալական շարժումների մոբիլիզացման դաշտը և հնարավորություն են տվել ստեղծել քաղաքացիական հասարակության նոր կառույցներ՝ թվային շահերի պաշտպանության կազմակերպություններ:
8. Ուժային բևեռների շահերի բախումները տարածաշրջանում, ինչպես նաև տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն ու կիբեռ կառավարման բազմաբնույթ մեխանիզմները հանգեցրել են բարդ իրավիճակի՝ խորացնելով ներքին և արտաքին

քաղաքական անկայունությունը տարածաշրջանում, ծնել նոր անորոշություններ ներկա և ապագա համագործակցության, համակեցության և անվտանգության ապահովման վերաբերյալ: Ակնհայտ առաջ են եկել նոր՝ քաղաքացիության և անվտանգային ճգնաժամերը:

9. Ավագ սերնդի գիտելիքի, փորձի փոխանակման և արդիականացման հիմքով՝ երիտասարդությունը պետք է առանցքային դեր ստանձնի երկրի սոցիալ-քաղաքական վերափոխումների մեջ, նրա ներկայացուցիչները պետք է դառնան նրա ուժային համակարգի կարևոր բաղադրիչը՝ ամրացնելով անվտանգային միջավայրը:
10. Ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրների բացահայտումը և վերլուծությունը՝ որպես համազգային հիմնախնդիր, ենթադրում է հայության ջանքերի համախմբում (Consolidation): ՀՀ հոգևոր անվտանգության ապահովումը և ոլորտի կայացումը հնարավոր է միայն **հասարակություն-քաղաքացի-պետություն-եկեղեցի** սերտ համագործակցության միջոցով:
11. Իմի բերելով հետխորհրդային երկրներում տեղի ունեցող գունավոր հեղափոխությունները (Վրաստան, Ուկրաինա, Ղրղզստան), կարող ենք ասել, որ քաղաքական զարգացման ճգնաժամը հարստանում է մարգինալությամբ, այսինքն՝ սահմանային արժեքներով տոգորված զանգվածները իրենց մարգինալ մասնակցությամբ հրապուրվում են սոցիալականով՝ անտեսելով քաղաքական և քաղաքացիական մշակույթի փոխլրացման անհրաժեշտությունը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. **Մովսիսյան Մ.,** Մասնակցային ժողովրդավարության արժեքային համակարգ բազմաչափությունը. Տարածաշրջան և աշխարհ, 3, 2019, Երևան, էջ՝14-24:
2. **Մովսիսյան Մ.,** Մասնակցային ժողովրդավարության և ազգային անվտանգության փոխհարաբերությունները՝ որպես պետականության ամրապնդման պայման. Գիտական Արցախ, 2(3), 2019, Երևան, էջ՝ 103-111:
3. **Մովսիսյան Մ.,** Մասնակցային ժողովրդավարությունը՝ որպես քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման գործոն, Հանրային կառավարում, ՀՀ ՊԿԱ հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, 2019, Երևան, էջ՝ 315-324:
4. **Մովսիսյան Մ.,** Տեղեկատվական անվտանգության ապահովման առանձնահատկությունները Ադրբեջանի Հանրապետությունում. Հանրային կառավարում, ՀՀ ՊԿԱ հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, 2019, Երևան, էջ՝ 324-332:
5. **Մովսիսյան Մ.,** Ցանցերի դերը ՀՀ ժողովրդավարացման գործընթացներում և ազգային անվտանգությունը. Գիտական Արցախ, 2(3), 2019, Երևան, էջ՝ 111-123:

6. **Movsisyan M., Margaryan M.,** Issues of complementing the political and civic culture in the conditions of the democratic transition of the Republic of Armenia, SCOPUS indexed Wisdom Journal, Vol. 19, N. 3(2021), p: 172-182.
7. **Մովսիսյան Մ.,** Կրթության դերն ազգային անվտանգության ապահովման գործընթացում, Պատմություն և քաղաքականություն հանդես, 4/2021, Երևան, էջ՝ 105-113:
8. **Մովսիսյան Մ., Մարգարյան Մ.,** Հոգևոր անվտանգությունը՝ ոպես ազգային և քաղաքացիական ինքնության փոխհարաբերությունների գործոն. «Էջմիածին» հանդես, օգոստոս (Ը), Էջմիածին, էջ՝ 77-88:
9. **Մովսիսյան Մ.,** Վարձկանների մասնակցությունը 2020թ. Արցախյան 44-օրյ պատերազմին և դրա ազդեցությունը միջազգային անվտանգային համակարգի վրա, Գիտական Արցախ, 4 (11), 2021, Երևան, էջ՝ :
10. **Մովսիսյան Մ., Մարգարյան Մ.,** Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը որպես անվտանգության ապահովման պայման. «Հայկական բանակ» ՌԳՀ, 2022:

МОВСИСЯН МАРИНЕ РАЗМИКОВНА

ОСНОВЫ РАЗВИТИЯ ПАРТИЦИПАТОРНОЙ ДЕМОКРАТИИ В ПРОЦЕССЕ ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 - “ Политические институты и процессы”.
Защита состоится 10 ноября 2022г., в 13:00 часов, на заседании специализированного совета 056 "Политология” ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения

Резюме

Во введении представлены актуальность проблемы, степень научной разработанности, объект и предмет исследования, цель и задачи, научная новизна, научная и прикладная значимость работы.

Работа состоит из введения, трех глав, заключения, библиографии, состоящей из 145 наименований. Объем диссертации составляет 121 страница.

Первая глава диссертации **«Система ценностей партиципаторной демократии как предпосылка консолидации после перехода к демократии»** состоит из двух подразделов.

В первой подглаве, озаглавленной **«Эволюция ценностей и модели партиципаторной демократии»,** были изучены и проанализированы динамика ценностной эволюции партиципаторной демократии в политическом времени и пространстве, ее маргинально-популистский и легитимный модусы, а также роль ответственного и сознательного гражданина в этих процессах.

Партиципаторная демократия переоценила образ полиса Агоры, где граждане пользовались правом самостоятельно принимать решения. Эта теория представляет собой попытку вернуться к принципам классической демократии. Помимо того, что человек считается частью коллектива, согласно мировоззренческому принципу теории, человек должен быть еще и самоуправляющимся гражданином.

Во второй подглаве, озаглавленной **«Партиципаторная демократия как фактор преодоления политических кризисов»,** рассмотрена логика изменения системы ценностей центра-периферии, развитых-развивающихся стран, а также электората и элит в контексте использование демократии участия было всесторонне изучено и представлено.

Вторая глава «Партиципаторная демократия как составляющая обеспечения национальной безопасности Республики Армения» состоит из двух подглав.

В первой подглаве второй главы под названием **«возможность обеспечения национальной безопасности посредством расширенной повестки дня партиципаторной демократии в РА»** обсуждалась среда, в которой находится Республика Армения, и винуждена срочно решать сложные проблемы ее бытия и сохранения государственности.

Во второй подглаве, озаглавленной **«Роль социальных медиа в процессах демократизации Республики Армения и национальной безопасности»,** обсуждалась взаимосвязь процессов переустройства мирового порядка и глобализации с информацией и информационными процессами. Доказано, что цифровые технологии в значительной степени изменили уровень рационализации труда, эффективной деятельности и целенаправленных процессов традиционных организаций гражданского общества.

Третья глава «Модернизация механизмов национальной безопасности Республики Армения, многовекторность» состоит из двух подглав.

В первом подразделе третьей главы, озаглавленном **«Политическая социализация молодежи как условие обеспечения безопасности в Республике Армения»,** обсуждался процесс политической социализации молодежи в послевоенной Армении как вопрос безопасности. В то же время конфликты интересов силовых полюсов в регионе, а также стремительное развитие новых информационно-коммуникационных технологий и механизмов киберуправления привели к усложнению ситуации, углублению внутри- и внешнеполитической нестабильности в регионе, порождая новые неопределенности в отношении нынешнего и будущего сотрудничества, сосуществования и безопасности.

Во второй подглаве «Валоризация отношений между политической и гражданской культурой как императив демократической консолидации в Республике Армения» информационные коммуникации, цифровые, психологические инструменты, используемые в ходе политических процессов, а также как основания и причины стихийного и/или активного организованного участия граждан. Также в контексте взаимосвязи политической и гражданской культуры обсуждались важность и эффективность прогосударственного лидерства вне зависимости от обстоятельств правящих лиц и в зависимости от их представлений о легитимной модели партиципаторной демократии и государственного суверенитета.

Основные результаты исследования обобщены **в заключении.**

MARINE MOVSISYAN

"THE PROBLEMS OF THE DEVELOPMENT OF PARTICIPATORY DEMOCRACY IN THE PROCESS OF ENSURING THE NATIONAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA"

Dissertation under IG.00.02 - "Political Institutions and Processes" aspiring to earn PhD in Political Science The public defense will take place on November 10 at 13:00 at the Yerevan State University, at 056 "Political Science" HAC Specialized Chamber session (Address A. Manukyan 1, Yerevan 0025, Republic of Armenia)

Summary

The introduction presents the relevance of the problem, the degree of scientific development, the object and subject of research, the purpose and objectives, scientific novelty, scientific and applied significance of the work.

The dissertation includes an introduction, three chapters, six subchapters, conclusion, recommendations, bibliography. The volume of the dissertation is 121 pages.

The first chapter of the dissertation - **"The value system of participatory democracy as a precondition for consolidation from the transition to democracy"-** is comprised of two subsections.

The first subchapter - **"The evolution of values and models of participatory democracy"-** were studied and analyzed.the dynamics of the value evolution of participatory democracy in political time and space, its marginal populist and legitimate modes, as well as the role of a responsible and conscious citizen in these processes.

Participatory democracy overestimated the image of the Agora polis, where citizens enjoyed the right to make their own decisions. This theory is an attempt to return to the principles of classical democracy. In addition to the fact that a person is considered part of a

team, according to the worldview principle of the theory, a person must also be a self-governing citizen.

In the second subchapter - **"Participatory democracy as a factor in overcoming political crises" -** has been comprehensively studied and presented the logic of changing the value system of the center-periphery, developed-developing countries, as well as the electorate and elites in the context of the use of participatory democracy.

The second chapter **"Participatory democracy as a component of ensuring the national security of the Republic of Armenia"** consists of two subchapters.

The first subchapter of the second chapter - **"Participatory democracy as an opportunity to ensure national security with an expanded agenda in the Republic of Armenia" -** examines the environment in which the Republic of Armenia finds itself and is forced to urgently solve the difficult problems of its existence and the preservation of statehood.

The second subchapter - **"The role of social media in the democratization of the Republic of Armenia and the national security"** - discussed the relationship between the processes of restructuring the world order and globalization with information and information processes. It has been proven that digital technologies have significantly changed the level of labor rationalization, efficient operation and purposeful processes of traditional civil society organizations.

The third chapter - **"Modernization of the national security mechanisms of the Republic of Armenia, multi-vector approach"** includes two subchapters.

The first subchapter of the third chapter - **"Political socialization of youth as a condition for ensuring security in the Republic of Armenia" -** discussed the process of political socialization of youth in post-war Armenia as a security issue. At the same time, the conflicts of interests of the power poles in the region, as well as the rapid development of new information and communication technologies and cyber control mechanisms, have led to a complication of the situation, deepening domestic and foreign political instability in the region, generating new uncertainties regarding current and future cooperation, coexistence and security.

The second subchapter - **"Valorization of relations between political and civic culture as an imperative for democratic consolidation in the Republic of Armenia" –** were introduced information communications, digital, psychological tools used in the course of political processes, as well as the grounds and causes of spontaneous and / or active organized participation of citizens. Also, in the context of the relationship between political and civic culture, the importance and effectiveness of pro-state leadership was discussed, regardless of the circumstances of the ruling persons and depending on their ideas about the legitimate model of participatory democracy and state sovereignty.

The main results of the study are summarized in the **conclusion**.